ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/3627/02/24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

29 մայիսի 2024 թվական քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Հ. Ջալալյանի (այսուհետ նաև՝ Դատարան), ուսումնասիրելով «ԱՍ-ՆԱԽԱԳԻԾ» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ ՀՀ կադաստրի կոմիտեի՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գլխավոր քարտուղար Միեր Խաչատրյանի՝ gnumner.minfin.am համացանցային կայքում 09.04.2024 թվականին հրապարակված որոշումը՝ «ԱՍ-ՆԱԽԱԳԻԾ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին, անվավեր ճանաչելու պահանջի մասին, և քննարկելով այն վարույթ ընդունելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

«ԱՍ-ՆԱԽԱԳԻԾ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Ս. Սարգսյանի կողմից 11.05.2024

թվականին էլեկտրոնային եղանակով հայցադիմում է ներկայացվել Դատարան ընդդեմ ՀՀ կադաստրի կոմիտեի՝ խնդրելով անվավեր ճանաչել ՀՀ կադաստրի կոմիտեի գլխավոր քարտուղար Միեր Խաչատրյանի՝ gnumner.minfin.am համացանցային կայքում 09.04.2024 թվականին հրապարակված որոշումը՝ «ԱՍ-ՆԱԽԱԳԻԾ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Դատարանի 17.05.2024 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

«ԱՍ-ՆԱԽԱԳԻԾ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Ս. Սարգսյանի կողմից 21.05.2024 թվականին էլեկտրոնային եղանակով հայցադիմումը կրկին ներկայացվել է Դատարան և նույն օրը մակագրվել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Հ. Ջալալյանին:

Էլեկտրոնային համակարգում կատարվող տեխնիկական աշխատանքներով պայմանավորված՝ կրկին ներկայացված հայցադիմումը դատավորի աշխատակազմին հասանելի է դարձել 23.05.2024 թվականին:

Դատարանն, ուսումնասիրելով էլեկտրոնային եղանակով կրկին ներկայացված հայցադիմումը, արձանագրում է, որ այն ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122-րդ հոդվածներով սահմանված պահանջներին համապատասխան:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան, հետևաբար, Դատարանը գտնում է, որ հայցադիմումը պետք է ընդունել վարույթ:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-125-րդ, 199-200-րդ, 234.6-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

«ԱՍ-ՆԱԽԱԳԻԾ» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ ՀՀ կադաստրի կոմիտեի՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գլխավոր քարտուղար Միեր Խաչատրյանի՝ gnumner.minfin.am համացանցային կայքում 09.04.2024 թվականին հրապարակված որոշումը՝ «ԱՍ-ՆԱԽԱԳԻԾ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին, անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:

Հայցադիմումը Դատարանում ներկայացված համարել այն սկզբնապես ներկայացնելու օրը՝ 11.05.2024 թվականը:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ Հ.ՋԱԼԱԼՅԱՆ

Digitally signed by JALALYAN HASMIK 6014860665
Date: 2024.05.29 19:32:03 AMT

տք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am